մախուոյ Հայ գիւղերի և գիւղացւոց մասին երկար գրել, վասն զի՝ այժմեան (1891) գիւղերը և գիւղացիք տարբերութիւն չեն արել 1850, 60 և 70 թուերի գիւղացիներից՝ ուսման, կըրթութեան, արուեստի և ուրիշ գիւղատնտեսական գիտութեանց մէջ, այլ մի և նոյն երկրագործ, այգեգործ գիւղացիք են, և նոյն կեանքն ու կառավարութիւնն ունին, միայն այս է գիւղացւոց նորութիւնը, որ՝ մեծ մասամբ երիտասարդք՝ դրամ վաստակելու յուսով գնում են Բագու, (ինչպէս և Ղարաբաղու և Սիսեանու գիւղացիք են վազում Բագու՝ Առաքել Աբէր, Գրիգոր Աբէր, Ներսէս Աբէր, եւայլն, զառնալու և հարստութեան տէր լինելու[1]). և մի քանի տարի մնալով Բագուում և ոչ ինչ շահուելով՝ վերադառնում են տուն, կորցնելով գիւղական առողջութիւնը, աշխոյժը, և ոյժը, և հազիւ ոմանց յաջողում է գործ և դրամ գտնել։

1888 թուին Սինոդից, յանուն իմ տուած տօմարում երևում է յօգուտ վերանորոգութեան Ս. Էջմիածնի Բագուեցւոց նուիրած 17,326 ռուբլի և 85 կոպէկ դրամոց ցուցակն այս է։

Հմ.	ԱՆՈՒԱՆՔ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ	Ռուբլի
1	Նիկողայոս, Սարգիս և Տիկին Նատալեայ Կրասիլնիկեանք նուիրեցին հանգուցեալ Ներսէս Կրանսիլնիկեանցի յիշատակին յանուն նորոգութեան տաճարի սուրբ Էջմիածնի . . .	3000
2	Գէորգ Լալաեանց	2000
3	Կարապետ Լալաեանց	1000
4	Առաքել Ծատուրեանց և ընկերութիւնն	1250
5	Հայրապետ Կուզնեցեանց	1000
6	Կասպեան ընկերութիւնն	1000
7	Աբգար Ադամեանց	1000
8	Յակոբ Գէորգեան Լալաեանց	1000
9	Տիկին Եղիսաբէթ Սարգսեանց	500
10	Գրիգոր Թումայեանց	500
11	Միսայէլ Շահազիզեանեանց	500

[1]) Առաքել Աբէր Ծատուրեանց, Գրիգոր Աբէր Թումայեանց, Ներսէս Աբէր Կրասիլնիկեանց, և այլք 1850 թուէն Բագու գնալով՝ դրամ ու համբաւ են ստացել։